**1864.**
25 Մայիսի
ըստ հին տօմարի :

*Թիւ 13.*
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ·

**1864.**
7 Յունիսի
ըստ նոր տօմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ·

Հրատարակութեան, մատակարարութեան եւ բաժանորդութեան վերաբերեալն է ի Մանչեսթր :

—Նամակք, յօդուածք, գիրք եւ դրամներ (ուրոյ է ծախս փոստայի) ուղղելի յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, գրելով այսպէս ·

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ ծախուք փոստայի, ամբ երկրին Անգլիոյ եւ Ֆրանսայի ընկերու եւ ընկերութ., է 25 շ. ֆ.

—Այն տեղերէն ուր փոստայի ծախքն առնուի վերայ է :

—Վեցամսեանն . . . . . . . . . . . 13 „

—Եռամսեանն . . . . . . . . . . . 7 „

—Մէկ թերթին գինն է Մանչեսթր է . . . . . 5

այլուր . . . . . . . . . . . 7

—Բաժանորդք կերպով անուն մը տալ պէտք եւ ստորագրելով :

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սենեակն ի Ղալաթա . —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն ·—Հալէպ Յովհաննէս Աղայ Քիւրքճեանովի սենեակն . —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն . —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն . —Կալկաթա Արբակրոն Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչիկեանի և Ասպետի սենեակն . — Բաթավիա Պ . Մանուկ Որդանանեանի սենեակն . — Լոնդոն Աղայ Մաքսուդովի սենեակն . — Փարիզ Աղա Պօղոս Արփաճեանի սենեակն : Առ այժմ ուղղներն կրնան վերոգրեալ սենեկաց մէկէն առնալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաց և ընթերցասէր քաղաքներ :

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Տեսութիւն Քաղաքականութեան. Գանուբեան Իշխանութիւնք.— Ֆրանսա.— Թուրքիա.— Բոմբայի աւետարանութիւն Միացեալ Նահանգաց եւ Անգլիոյ մէջ.— Պոմպէյի աւերակները.— Բնագիտութիւն.— Կրօնական— Աստուածաբանութիւն.— Ճանապարհորդութիւն ի Հայաստան.— Խառն Լուրեր.— Վերջին Լուրեր.— Երբեմնեան ազգայնոց.— Ազդարարութիւն :

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Պ. Բեօստի Փարիզ գնալն , եւ Նապոլէօն Գ. կայսեր հետ ըրած տեսութիւնն այս շաբթուան լրագիրներու խորհրդածութեանց առարկայ եղան: Քաղաքական հողմացոյցն անխախտութեան բուք, խորհրդակցութեան անդամոց անմիաձայնութիւն , դքսութեանց Դանիմարգէն զատուիլն և Օգոստենբուրգի դաւադանին տակ զատ տէրութիւն ըլլալն կգուշակէ : Յիշեալ դքսութիւններն վերստին անձնական յօդով Դանիմարգի արքային հետ կապելու այլ ևս խօսք չըլլար : Այս է ահա , եթէ ոչ ճշմարիտ, գէթ այս շաբթուանս լրագրոց արձագանգն , զոր , յայժ հաւանականաբար , եկող շաբաթն նորէն մաղէ : Ֆրանսայի և Գերմանիոյ նորագոյն լուրերն այսպէս կմեկնեն : Հոլշտայնն և Շլեզվիգի հարաւային մասն Դանիմարգէն զատուելով պիտի անկախ տէրութիւն ըլլան . Շլեզվիգի հիւսիսային մասն կցուի բոլորովին Դանիմարգի հետ : Բայց յայտմանէ , Գերմանիա Դանիմարգէն 230 միլիոն ֆ. պատերազմի ծախք կպահանջէ , և Կիել՝ դաշնակցութեան նաւահանգիստ և Ռենդսբուրգ՝ դաշնակցութեան ամրոց ըլլալ կպնդէ : Հաւանական է որ Խորհրդակցութեան չէզոք երեսփոխաններն Պ. Բիսմարգի այսպիսի արտառոց պահանջմանցն բացէ ի բաց մերժեն :

—Լոնդոնի Խորհրդակցութիւնն առեն առեն կհաւաքուի . այլ ամեն բան գաղտնի է : Պարբերական թերթերու լուրերն այսմ մասին , աւելի գուշակութիւն են քան թէ իրականութիւն : Դանիմարգ սակաւ առ սակաւ կըմտեցանայ այն իղձային թէ . լաւագոյն է ձեռք վերցնելով բոլորովին Հոլշտայնէն ամեն տեսակ յարաբերութիւն կտրել Գերմանիոյ հետ , որոյ կորստաբեր ազդեցութիւնն իր սեպհական գործոյ վերայ առեն առեն կտեսնուի: Ձիարդ և իցէ , եթէ Դանիմարգ Եւրոպայի արդարադատութենէն այսպիսի փրկարար խրատ առնելով՝ յանձն առերէ , իր սեպհական գոյութիւնն պահելու համար . մէկ գաւառ և քանի մի հարիւր հազար այլասեռ հպատակ զոհել, շատ հաւանական է , որ չէզոք Տէրութեանց պատգամաւորներն Դանիմարգեան Շլեզվիգի եւ Հոլշտայնի մէջ մէկ նոր և վայելուչ սահման կորելով՝ հին և նոր գժտութեանց նիւթն անհետ ընեն բոլորովին : Մայիսի 28ի խորհրդակցութիւնն տեղի ունեցաւ . և հետեւեալն Յունիսի 2ին ձըգուեցաւ և եղաւ :

— Դանուբեան իշխանութեանց ժողովուրդն, կըսեն նոր հեռագիր լուրերն, սաստիկ եռանդեամբ, ընդհանրական քուէ տուին Իշխան Կուզայի առաջարկուած ընտրութեան օրէնքին : Մէկ նոր դաւադրութիւն յայտնուեցաւ ; որոյ նպատակն էր գահավէժ ընել Կուզա Իշխանն և անոր տեղ իշխան կարգել Սուցա , ինչպէս նաև արդի Սահմանադրութեանն փոխանակել հին կարգադրութիւնն : Իշխան Սուցա, դաւի գլխաւոր հեղինակն, բռնուեցաւ և բանտարկուեցաւ և խոստովանեցաւ ամեն եղելութիւնն : Դաւադրութիւնն յայտնուեցաւ այն թուղթերէն , զորս գտան Կոստանդնուպոլսէն նոր եկած Լամբերտի անուն բժշկին վերայ : Սուցայի բնութիւնն ուրիշ մէկ դաւ յայտնեց , որոյ նպատակն էր իշխան Կուզա սպաննել և Մոլդավիա Վալաքիայէն զատել :

—Անգլիա , յայտնի է որ, Եւրոպա և Ամերիկա իրարու հետ հեռագրով կապելու համար, քանի մի անօգուտ փորձեր ըրաւ Ատլանտեան ովկիանոսին մէջ : Այժմ այս պաշտօնս Ռուսիա յանձն առերէ, և , մեծամեծ գումարներ ծախք ընելով՝ արդէն Պետերբուրգէն սկսեալ մինչև Սիբերիոյ հեռաւոր մասին մէջ հեռագրական հաղորդութիւն հաստատերէ : Եթէ գործողութիւնն այսպէս յառաջ քալէ՝ այն ատեն Բերինգեան նեղուցի միջոցաւ , և շատ ժամանակ չանցած , Եւրոպա և Ամերիկա իրարու հետ կապուին և միշտ հաղորդութիւն ունենան .

